ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՆՇՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանի ու Արցախի թեմական առաջնորդների և ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանի գլխավորությամբ Մայր Աթոռ այցելած Հայաստանի մարզպետների հանդիպում:

Ողջունելով բոլոր հրավիրյալներին, Վեհափառ Հայրապետը կարևորեց հասարակական կյանքի կազմակերպման ու զանազան սոցիալական խնդիրների լուծման ասպարեզում Եկեղեցի-պետություն համագործակցությունը, որի լավագույն գրավականը, հանդիպման մասնակիցների համոզմամբ, կարող է դառնալ հոգևոր և աշխարհիկ այրերի համատեղ աշխատանքը:

Մոտենում է հոբելյանական 2000 թվականը և, որպես համագործակցության առաջին քայլ, որոշվեց մշակել համատեղ ծրագրեր՝ Ամանորն ու Քրիստոսի Սուրբ Ծնունդը Հայաստանում մեծ շուքով դիմավորելու համար: Այս կապակցությամբ տրվեցին հանձնարարականներ մարզպետներին և թեմական առաջնորդներին, որոնք իրենց միասնական ծրագրերը կներկայացնեն տասը օր անց՝ հաջորդ ժողովի հաստատմանը:

Հանդիպման ընթացքում առաջնորդներն անդրադարձան նաև Հայաստանում աղանդների տարածման խնդրին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի համոզմամբ Եկեղեցու զորացումն ու մանուկ սերնդի հայեցի դաստիարակությունը ինքնին պայքար է աղանդավորության դեմ: Կիսելով հոգևոր այրերի մտահոգությունները, մարզպետները պատրաստակամություն հայտնեցին զորակից լինել Եկեղեցուն կրթադաստիարակչական գործունեության մեջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ
ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ

Խոսրով Հարությունյանը չափազանց կարևոր համարեց այս հանդիպումը՝ նշելով, որ այն նոր լիցք է հաղորդում Եկեղեցի-պետություն համագործակցությանը: Նրա կարծիքով, առաջին անգամ կազմակերպված այս հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ կուտակված բազմաթիվ խնդիրներ իրապես համապեղ լուծման կարիք ունեն:

Իրենց գոհունակությունը հայտնելով հանդիպման արդյունքներից, մասնակիցները ցանկություն հայտնեցին նմանատիպ հանդիպումները դարձնել պարբերական՝ առավել ընդարձակ ծրագրերի քննարկումներով:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց մարզպետներին՝ հրավերին արձագանքելու և Հայ Եկեղեցու նկատմամբ նախանձախնդիր լինելու համար:

* * *

Դեկտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանի մասնակցությամբ, տեղի ունեցավ Հայաստանի թեմական առաջնորդների և Հայաստանի մարզպետների երկրորդ հանդիպումը:

Դեկտեմբերի սկզբին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, այս անգամ Հայաստանի հոգևոր և պետական այրերը Վեհափառ Հայրապետի և պրն. Հարությունյանի ուշադրությանը ներկայացրին Ամանորի ու Ս. Ծննդյան տոնակատարությունների համապեղ մշակված իրենց ծրագրերը:

Տոնական օրերին հայաստանյան թեմերի և մարզային իշխանությունների միասնական ջանքերով մշակութային հանդեսներ ու տոնախմբություններ կկազմակերպվեն Հայաստանի մեծ և փոքր բազմաթիվ բնակավայրերում, ամանորյա նվերներ և հոգևոր գրականություն կստանան հազարավոր դպրոցականներ: Ուշադրության կենտրոնում կլինեն նաև զինվորական հոսպիտալները, հիվանդանոցները, ծերանոցներն ու մանկապարտեզները:

Ամանորյա հանդիսություններն ամբողջանալով, իրենց բարձրակետին կհասնեն հունվարի 5-ին և 6-ին, երբ Հայ Առաքելական Եկեղեցին և հայ ժողովուրդը տոնում է Ս. Ծնունդն ու Աստվածահայտնությունը:

Հավանություն տալով ներկայացված ծրագրերին, Վեհափառ Հայրապետն ու Խոսրով Հարությունյանը նշեցին, որ տոնական ծրագրերի համատեղ իրագործումը Եկեղեցի-պետություն միասնականության լավագույն վկայականը կարող է հանդիսանալ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ